*Գոհար Սիմոնյան* [1]

# ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷՄԲՐԻՈՆԻ ԵՎ ՊՏՂԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ

Ժամանակակից իրավական համակարգերը (ազգային և միջազգային) դեռևս չծնված երեխայի կարգավիճակի նկատմամբ դրսևորում են երկակի, հաճախ հակասական մոտեցումներ: Մի մոտեցումն այն է, որ պետությունը, իր քրեական օրենսդրության մեջ համապատասխան դրույթներ նախատեսելով, առաջնային խնդիր է համարում դեռևս չծնված երեխայի պաշտպանությունը բռնի գործողություններից, մարդկային սաղմի հետ կապված փորձերից, իսկ հասարակության մեջ գերակշռում են ակնհայտ հակաաբորտային տրամադրությունները: Մյուս մոտեցման համաձայն՝ պետությունը կնոջ «մայրանալու ազատությունը» գերակա է դիտում դեռևս չծնված երեխայի կյանքի իրավունքի նկատմամբ, որը, իհարկե, ոչ միշտ է բացարձականացվում: Եթե առաջին մոտեցումը դեռևս չծնված երեխային բնութագրում է այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են «մարդը» և «անձը», ապա երկրորդը ընդգծում է աբորտի սահմանադրական իրավունքը: Դեռևս չծնված երեխայի իրավական կարգավիճակի ժամանակակից մոտեցումը վկայում է այն մասին, որ շատ պետություններ «պտղի արժեքի» հարցը չեն թողնում միայն մոր հայեցողությանը, այլ փորձում են դրան իրավական, թեև ոչ միշտ հստակ, կարգավորում տալ[2]:

Մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության հարցում անգնահատելի է միջազգային իրավական նորմերի և չափորոշիչների դերը: Սակայն դեռևս չծնված երեխայի իրավական կարգավիճակի և պաշտպանության հարցերը միջազգային իրավունքում բավականին

---

[1] ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իր.գ. թ., դոցենտ Ա. Ռ. Մարգարյան:

[2] Տե՛ս **Shaun Alberto De Freitas, Georgia Alida Myburgh,** «Seeking Deliberation on the Unborn in International Law», University of the Free State - Faculty of Law, Potchefstroom Electronic Law Journal, Vol. 14, No. 5, 2011, էջ 11:

մշուշոտ են և, միաժամանակ, սերտորեն առնչվում են մի շարք այլ սկզբունքային հարցերի հետ, ինչպիսիք են, օրինակ, կյանքի սկզբի և դեռևս չծնված երեխայի՝ մարդկային էակ հանդիսանալու հարցերը:

Նախ անդրադառնանք Մարդու իրավունքների 1948 թվականի համընդհանուր հռչակագրին, որը ոգեշնչել է մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր կոնվենցիաները և հետագա հռչակագրերը: Վերջինիս նախաբանում խոսվում է «մարդկային ընտանիքի բոլոր անդամների հավասար և անօտարելի իրավունքների ճանաչման» մասին, 3-րդ հոդվածում նշվում է, որ «յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք...», իսկ 7-րդ հոդվածն ավելացնում է հավասարության հասկացությունը, այն է՝ «բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, օրենքով հավասար պաշպանության իրավունք ունեն»:

Չնայած նրան, որ Հռչակագրի հեղինակները որոշել են անմիջականորեն չանդրադառնալ չծնված երեխային, սակայն մարդու իրավունքների առարկան նկարագրելիս օգտագործել են հնարավորինս լայն և ընդգրկուն լեզու[3]:

1966 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից»:

Հռչակագրում օգտագործվող «յուրաքանչյուր ոք» արտահայտության սահմանները հստակ որոշված չեն, սակայն ոչ էլ սահմանափակված են: Միևնույն հոդվածի 5-րդ մասն արդեն նշում է, որ մահապատիժը ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ: Հռչակագրի վերոնշյալ պարագրաֆը, այն է՝ հղի կնոջը մահապատժի ենթարկելու արգելքը, այն ընդհանուր մոտեցման հստակ արտահայտությունն է, որ դեռ չծնված երեխան ևս մարդ է, ունի պաշտոնական ճանաչման և պաշտպանության իրավունք:

1989 թվականի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ներառում է դեռևս չծնված երեխայի պաշտպանության վերաբերյալ մի շարք կարևոր դրույթներ: Մասնավորապես, նախաբանում հղում է

[3] Տե՛ս John I. Fleming, Michael G. Hains, «The right to life of the unborn and international law.», Australian Bar Review, Vol. 16(2), December 1997, էջ 1:

կատարվում Գլխավոր ասամբլեայի 1959 թվականի նոյեմբերի 20-ին ընդունած Երեխայի իրավունքների հռչակագրի վրա, համաձայն որի «երեխան, հաշվի առնելով նրա ֆիզիկական և մտավոր անհասությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հոգատարության, նեբառյալ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»: Իսկ կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր երեխա ունի կյանքի անկապտելի իրավունք և մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով ապահովում են երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը»:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 1-ին հոդվածը երեխային բնորոշում է որպես «18 տարեկան չդարձած յուրաքանչյուր մարդկային էակ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ»: Այս հոդվածի վերաբերյալ բանակցությունների ընթացքում, Մարդու իրավունքների հանձնաժողովի Աշխատանքային խմբի որոշ անդամներ երեխային բնորոշում էին, որպես «յուրաքանչյուր մարդկային էակ՝ ծննդյան պահից»: Սակայն հանձնաժողովի մյուս անդամները, նշելով, որ դա կարող է հակասել 1959 թվականի Երեխայի իրավունքների հռչակագրին, ինչպես նաև բազմաթիվ անդամ պետությունների ներպետական օրենքներին, առաջարկում էին հետևյալ սահմանումը. «երեխա է հանդիսանում յուրաքանչյուր մարդկային էակ՝ բեղմնավորման պահից»[4]:

Այսպիսով, չնայած այս կոնվենցիայի 1-ին և 6-րդ հոդվածները հստակորեն չեն ամրագրում դեռ չծնված երեխայի կյանքի իրավունքը և այդ իրավունքը պաշտպանելու պետության պարտականությունը, այնուամենայնիվ, այս հոդվածների կշիռը նախաբանի հետ միասին ամուր հիմք է ապահովում այն պնդման համար, որ դեռևս չծնված երեխան նշված կոնվենցիայի շրջանակներում ունի իրավական պաշտպանության իրավունք: Կոնվենցիան աբորտի իրավունքի վերաբերյալ որևիցե դրույթ չի պարունակում, ընդհակառակը, ծնված երեխայի կյանքի կողքին կարևորում է դեռևս չծնված երեխայի կյանքը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի եվրոպական կոնվենցիան և նրա առանձին արձանագրությունները ոչինչ չեն ասում դեռևս չծնված ե-

[4] Տե՛ս Patrick J. Flood, «Does International Law Protect the Unborn Child?», UFL Life and Learning Conference XVI, 2006, էջ 8-9:

ռեխայի կյանքի իրավունքի կամ աբորտի մասին: Կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»:

Եվրոպական դատարանի սահմանած ընդհանուր դիրքորոշման համաձայն ո՛չ ցանկալի է և ո՛չ էլ հնարավոր վերացական պատասխան տալ այն հարցին, թե արդյոք չծնված երեխան Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է անձ: Հ.-ն ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանը գտել է, որ հարկ չկա որոշելու «արդյոք սաղմը կարող է օգտվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին նախադասությամբ երաշխավորվող պաշտպանությունից», սակայն չի բացառում այն հնարավորությունը, որ «որոշակի հանգամանքներում դա այդպես էլ կլինի չնայած բարձր պայմանավորվող կողմերի շրջանում զգալի տարաձայնություն կա այն հարցի շուրջ, թե արդյոք կամ ի՞նչ պատճառով է 2-րդ հոդվածը պաշտպանում չծնվածի կյանքը»: Դատարանի համոզմամբ նման զգայուն հարցում բարձր պայմանավորվող կողմերը պետք է պահպանեն գործողության որոշակի ազատություն[5]: Հայերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Դատարանը նշել է, որ կյանքի սկզբնավորման պահը որոշելու խնդիրն առանձին երկրների հայեցողության սահմաններում է: Ընդհանուր առմամբ տվյալ ոլորտում պետությունները պետք է ունենան նման իրավասություն, անկախ Կոնվենցիայի էվոլյուցիոնիստական մեկնությունից՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ այն «գործող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի այսօրվա պահանջներին համապատասխան»[6]:

Այսպիսով, Եվրոպական դատարանը ընդունել է այն ընդհանուր սկզբունքը, համաձայն որի չծնված երեխայի իրավունքների նկատմամբ հարգանքը թողնված է ներպետական օրենսդրություններին: Ո՛չ Եվրոպական դատարանը և ո՛չ էլ մինչև այդ Հանձնաժողովը Եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից չեն լուծել աբորտի իրավունքի և դեռևս չծնված երեխայի կյանքի իրավունքի հարաբերակցության

---

[5] Տե՛ս **Էլիսթեր Մոուբրեյ,** Գործեր և նյութեր. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Երևան, 2010, էջ 107:

[6] Տե՛ս **Էլիսթեր Մոուբրեյ,** նշված աշխատությունը, էջ 108:

հարցը, սակայն նշել են, որ ներպետական օրենսդրությունները պետք է ձգտեն հավասարակշռել հղի կնոջ և նրա դեռևս չծնված երեխայի շահերը: Նման մոտեցմամբ Եվրոպական դատարանը, կարծես ուզում է երկու բան անել. առաջինը՝ պահպանել ժողովրդավարական ինքնակառավարման սկզբունքը և երկրորդը՝ խթանել շահերի հավասարակշռման ընդհանուր մոտեցումը:

Մարդու կյանքի, բարեկեցության և արժանապատվության պաշտպանությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության հիմնական նպատակներն են: Կանոնադրությամբ բոլոր անդամ պետությունների, ՄԱԿ-ի կառույցների և միջկառավարական գործակալությունների վրա հստակ իրավական պարտավորություն է դրված՝ հավաքական ջանքերով նպաստել «մարդու իրավունքների» պաշտպանությանը: Միջազգային հանրությանը պետք է շարունակաբար հիշեցնել, որ օրենքը պետք է ծառայի մարդկությանը. չպետք է անուշադրության մատնել չծնված մարդկային էակի իրավական կարգավիճակը, այլ ընդհակառակը, անհրաժեշտ է շարունակական կերպով զարգացնել հստակ պատկերացում դրա վերաբերյալ: Պետությունները պետք է նաև հաշվի առնեն այն ազդեցությունը, որ ունի աբորտը կնոջ վրա: Կինը աբորտի համար պետք է տա հստակ համաձայնություն, և որոշում կայացնելու համար նրան պետք է տրամադրվի ամենաբարձր որակի տեղեկատվություն: Հետևաբար, դեռևս չծնված երեխայի իրավական կարգավիճակի վերաբերյալ միջազգային քննարկումները պետք է ծավալվեն ոչ միայն չծնված երեխայի, այլ նաև վերջինիս մոր վերաբերյալ[7]:

1989 թվականին Եվրոպայի խորհրդի շրջանակներում Բիոէթիկայի փորձագետների ժամանակավոր հանձնաժողովի (CAHBI)՝ այսօր գործող Բիոէթիկայի ղեկավար հանձնաժողովի (CDBI) իրավանախորդի կողմից մշակվել էր զեկույց մարդու արհեստական վերարտադրողականության վերաբերյալ, որը իրավական ուժ չունեցող փաստաթուղթ էր: Սակայն այն սահմանեց մի շարք սկզբունքներ, որոնք օգտակար աղբյուր հանդիսացան անդամ պետությունների համար մի ոլորտում, որը դեռ զարգացման համեմատաբար վաղ փուլում էր: 1992 թվականին Բիոէթիկայի ղեկավար հանձնաժողովը սկսեց իր աշխատանքները շրջանակային կոնվենցիայի մշակման

[7] Տե՛ս **Shaun Alberto De Freitas, Georgia Alida Myburgh,** նշված աշխատությունը, էջ 21-22:

ուղղությամբ՝ կենսաբժշկական գիտությունների համատեքստում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ընդհանուր չափորոշիչներ սահմանելու համար: Այդ աշխատանքի արդյունքը եղավ այն, որ 1997 թվականի ապրիլի 4-ին ստորագրման համար բացվեց Մարդու իրավունքների և մարդկային էակի արժանապատվության պաշտպանության մասին Օվիեդոյի կոնվենցիան, կապված կենսաբանության և բժշկության ձեռքբերումների կիրառման հետ (Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա)[8]:

Օվիեդոյի կոնվենցիայի 13-րդ հոդվածը արգելում է միջամտությունը մարդկային գենոմին, իսկ 14-րդ հոդվածը սահմանում է ընդհանուր արգելք՝ մարդկային վերարտադրողականության արհեստական բժշկական մեթոդների օգտագործման համար՝ երեխայի սեռի ընտրության նպատակով, բացառությամբ առողջության հետ կապված շատ սահմանափակ դեպքերի:

Մարդկային էմբրիոնի պաշտպանության վերաբերյալ վերոնշյալ կոնվենցիայի թերևս ամենակարևոր դրույթը ամրագրված է հոդված 18-ում, որը վերաբերում է էմբրիոնների վրա «in vitro» (երբ փորձը կատարվում է «փորձանոթում»՝ կենդանի օրգանիզմից դուրս) հետազոտություններին, համաձայն որի. «1. Այն դեպքերում, երբ օրենքը թույլ է տալիս էմբրիոնների «փորձանոթային» հետազոտություն, այն պետք է նաև ապահովի էմբրիոնների պատշաճ պաշտպանությունը: 2. Արգելվում է մարդկային էմբրիոնների ստեղծումը հետազոտական նպատակներով»:

Հիշատակման է արժանի նաև հոդված 27-ը, համաձայն որի՝ կոնվենցիայի ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես սահմանափակող և չպետք է ազդի անդամ պետությունների վրա, որպեսզի վերջիններս կենսաբանության և բժշկության ձեռքբերումների կիրառման առնչությամբ տրամադրեն ավելի մեծ պաշտպանություն, քան նախատեսված է կոնվենցիայով:

Էմբրիոնների պաշտպանության համար կիրառվող միջոցները կարող են տարբեր լինել՝ կախված զարգացման փուլից և մի շարք այլ առանձնահատկություններից: Թեև, հարկ է ընդգծել, որ ոչ բոլոր

---

[8] Տե՛ս http://www.coe.int/t/dg3/healthbioethic/cdbi/default_en.asp (Convention for the Protection of Human Rights and Dignity of the Human Being with regard to the Application of Biology and Medicine: Convention on Human Rights and Biomedicine, 4 April 1997):

երկրներն են որդեգրել էմբրիոնների իրավական պաշտպանության քաղաքականությունը:

Էմբրիոնների պաշտպանության նպատակներից մեկն այն է, որպեսզի վերջիններս բժշկական փորձարարության առարկա չդառնան, քանի որ դրանք կարող են վնասվել: Էմբրիոնը պետք է պաշտպանության արժանանա հենց բեղմնավորման պահից և պետք է արգելվի վերջինիս դեմ ուղղված ցանկացած ոտնձգություն:

Ժամանակակից աշխարհում արհեստական բեղմնավորումը մեծ կարևորություն ունի, այսպես՝ Ֆրանսիայում ամեն տարի արհեստական բեղմնավորմամբ են ծնվում երեխաների մոտ 2 տոկոսը (ավելի քան 7.000 զույգերից)[9]:

Սակայն արհեստական բեղմնավորման լայնորեն տարածումը առաջ է բերում մի շարք այլ խնդիրներ: Մասնավորապես, բեղմնավորման համար ձեռքբերված էմբրիոնների քանակը հաճախ շատ ավելին է լինում, քան ողջամտորեն անհրաժեշտ է հղիության համար: Այս պարագայում չօգտագործված էմբրիոնները սառեցվում են: Բայց գրեթե ոչ մի երկրի ներքին օրենսդրություն չի սահմանում այն ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է պահպանվեն սառեցված էմբրիոնները:

Գերմանիայում, Մալթայում, Ավստրիայում օրենքն արգելում է արհեստական եղանակով ստեղծել ավելի շատ էմբրիոններ, քան անհրաժեշտ է հղիության համար: Դրանց առավելագույն թվաքանակը հասնում է մինչև երեք էմբրիոնի, որից ավելի էմբրիոնների ստեղծումն արգելվում է քրեական օրենսգրքերով:

Այս տեսանկյունից էլ ծագում են այլ հարցեր, մասնավորապես՝ էմբրիոնների հետագա ճակատագրի հարցը: Այն էմբրիոնների ճակատագիրը, ում ծնողները որոշել են հրաժարվել արհեստական բեղմնավորումից, որպես կանոն, որոշվում է ծնողների փոխադարձ համաձայնությամբ:

Մի շարք երկրներում, այն էմբրիոնները, որոնք այլևս զրկված են ծնողական պաշտպանությունից, կարող են նվիրաբերվել ուսումնասիրությունների համար, սակայն այս ուսումնասիրությունների թույլատրելի նպատակները շատ սահմանափակված են. պետք է պահ-

[9] Տե՛ս The protection of the human embryo in vitro, Report by the Working Party on the Protection of the Human Embryo and Fetus (CDBI-CO-GT3), Steering Committee on Bioethics(CDBI), Strasbourg, 19 June 2003, էջ 16:

պանվեն օրենքի հստակ պահանջները՝ հատկապես էմբրիոնների պահպանման պայմանների հետ կապված: Չպետք է մոռանալ, որ այս պարագայում խոսքը գնում է միայն նվիրաբերության մասին, քանի որ գործում է այն հստակ սկզբունքը, համաձայն որի մարդուն գնելը կամ վաճառելն արգելվում է: Հետևաբար, էմբրիոնը ևս չի կարող ապրանք համարվել: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ այս սկզբունքը վերաբերում է մարդկային կյանքին, լինի դա կենդանի մարդու մարմին, թե՝ ոչ. մարդկային մարմինը դասական իմաստով համարվում է «res extra commercium»[10]:

Մարդկային մարմնի ոչ կոմերցիոն լինելու սկզբունքն իր տեղն է գտել Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվեցիայի 21-րդ հոդվածում, որը սահմանում է. «Մարդկային մարմինը և դրա մասերը չպետք է լինեն ֆինանսական առավելություն ստանալու միջոց»:

Այս սկզբունքին մասամբ հակադրվում է «Ազատ ծնունդի» հայեցակարգը, որը հավասարազոր է այն սոցիալական կոնտեքստին, որ չպետք է միջամտել վերարտադրողական ընտրությանը: Կանանց բարոյական իրավունքի՝ ի դեմս ազատ վերարտադրողականության վերաբերյալ փաստարկները ընդգծում են կանանց երեխա ունենալու սոցիալական իրավունքի կարևորությունը, կամ լուրջ առողջական խնդիրներ ունեցող կանանց երեխա ունենալու հնարավորությունը:

Ներկայումս որոշ ազգային օրենսդրական համակարգերում անձի արհեստական վերարտադրողականության բժշկական հասանելիությունը երբեմն որոշակի սահմանափակումների է ենթարկվում: Օրինակ, շատ երկրներում նման հնարավորությունն արգելվում է հոմոսեքսուալ զույգերի համար:

Հարկ է նշել, որ «նվիրատվության» հայեցակարգը ժամանակ առ ժամանակ խնդիրներ է առաջացնում, քանի որ կապված է «սեփականության» գաղափարի հետ, որը միանշանակ չի ընդունվում: Սակայն նվիրաբերությունը կամ, ինչպես այն երբեմն անվանում են, «որդեգրումը» էմբրիոնին զարգանալու հնարավորություն է ընձեռում, ինչն ավելի ընդունելի է, քան վերջինիս ոչնչացումը: Բարձրացվում է նաև նվիրաբերության գաղտնիության հարցը, որի որդեգրման գաղտնիքի հետ նույնացումը վեճերի տեղիք է տալիս:

---

[10] Տե՛ս, նույն տեղում, էջ 9:

Վերոշարադրյալ միջազգային չափանիշների լույսի ներքո բարձրացված հարցերից և ոչ մեկի պատասխանը Հայաստանի ներպետական օրենսդրությունը չի տալիս: Այսպես, 2002 թվականին ընդունվել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որն առավելապես կարգավորում է բժշկական բնույթի հարցեր: Մասնավորապես, օրենքում սահմանվում է սեռաբջիջները և սաղմը վերարտադրողական նպատակով հանձնելու իրավունքը, իսկ վերջիններիս պահպանման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ: Օրենքում խոսվում է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված իրավական հարաբերությունների մասին՝ առանց անգամ անդրադառնալու էմբրիոնների պաշտպանության վերաբերյալ վերոքննարկված հարցերին: Օրենքի պահանջների խախտման համար գործուն պատասխանատվության մասին խոսելն իսկ ավելորդ է:

Օրենքում մատնանշված, «Վերարտադրողականության դոնորների, ինչպես նաև վերարտադրողականության դոնոր չհանդիսացող քաղաքացիների կողմից սեռաբջիջների տրամադրման, տրամադրված սեռաբջիջների և սաղմի պահպանման կարգն ու պայմանները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2003 թվականի որոշման մեջ խոսվում է ընդամենը կրիոկոնսերվացված սաղմի պահպանման առավելագույն ժամկետի մասին (6 ամիս)՝ առանց անդրադառնալու էմբրիոնի պահպանման, ոչնչացման, նվիրատվության, փորձեր կատարելու և այլ առանցքային հարցերի: Իսկ էմբրիոնների քրեաիրավական պաշտպանության վերաբերյալ մեր երկրում դեռ հստակ քայլեր չեն ձեռնարկվել:

Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով մեր ներպետական իրավական համակարգում հրատապ նորարարությունների անհրաժեշտությունը, հատկապես կարևորում ենք այս ոլորտի առանձին երկրների փորձի ուսումնասիրությունը:

Էմբրիոնների քրեաիրավական պաշտպանության տեսանկյունից արտասահմանյան երկրները կարելի է դասակարգել երեք կատեգորիայի՝ 1) երկրներ, որտեղ էմբրիոնների քրեաիրավական պաշտպանությունը իրականացվում է ինչպես քրեական օրենսգրքով, այնպես էլ ոլորտը կարգավորող առանձին իրավական ակտով, 2) երկրներ, որտեղ էմբրիոնների քրեաիրավական պաշտպանությունը իրա-

կանացվում է միայն առանձին իրավական ակտով, և 3) երկրներ, որտեղ էմբրիոնների քրեաիրավական պաշտպանությունը իրականացվում է քրեական օրենսգրքով:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը կարելի է դասել առաջինների շարքին: Վերջինս 1990 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունել է օրենք «Էմբրիոնների պաշտպանության մասին», որն իրենից ներկայացնում է էմբրիոնների քրեաիրավական պաշտպանության ոլորտի համակարգված իրավական ակտ: Վերոնշյալ օրենքի 1-ին հոդվածը առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկում է նախատեսում յուրաքանչյուրի համար, ով՝

1. կնոջ օրգանիզմ կփոխադրի մեկ այլ կնոջ չբեղմնավորված ձվաբջիջ,
2. կփորձի արհեստականորեն բեղմնավորել ձվաբջիջ ոչ թե այն կնոջ հղիացման նպատակով, ում պատկանում է այդ ձվաբջիջը, այլ ուրիշ նպատակների համար,
3. կփորձի բուժման մեկ ցիկլի ընթացքում կնոջ օրգանիզմ փոխադրել ավելի քան երեք էմբրիոն,
4. կփորձի բուժման մեկ ցիկլի ընթացքում սեռական բջիջները արգանդափողի մեջ փոխադրելու միջոցով բեղմնավորել ավելի քան մեկ ձվաբջիջ,
5. կփորձի բեղմնավորել կնոջ ավելի շատ ձվաբջիջ, քան անհրաժեշտ է նրա օրգանիզմ փոխադրել բուժման մեկ ցիկլի ընթացքում,
6. կհեռացնի էմբրիոնը կնոջ օրգանիզմից մինչ արգանդի մեջ իմպլանտացիայի ավարտը՝ այն մեկ այլ կնոջ մեջ փոխադրելու կամ այն այլ նպատակով օգտագործելու մտադրությամբ՝ չապահովելով վերջինիս պահպանությունը,
7. կփորձի արհեստական բեղմնավորումը իրականացնել այն կնոջ համար, ով պատրաստվում է հրաժարվել երեխայից ծննդաբերությունից հետո (փոխնակ մայր) կամ կփորձի մարդկային էմբրիոնը փոխադրել նրա օրգանիզմ[11]:

Օրենքի 2-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում մարդկային էմբրիոնի ոչ ճիշտ օգտագործման համար: Մասնավորապես, առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկ-

[11] Տե՛ս The Embryo Protection Act of Germany, 13 December 1990:

մամբ կամ տուգանքով է պատժվում յուրաքանչյուր ոք, ով տնօրինում, հանձնում, ձեռք է բերում կամ օգտագործում է էմբրիոնը՝ չմտածելով վերջինիս պահպանության մասին, կամ հեռացնում է էմբրիոնը կնոջ օրգանիզմից մինչ արգանդի մեջ իմպլանտացիայի ավարտը: Նույն կերպ պատժվում է նաև հղիության հանգեցնելուց բացի այլ նպատակով էմբրիոնի հետագա զարգացմանը նպաստելը:

Հոդված 11-ը քրեական պատասխանատվություն է նախատեսում այն անձի համար, ով, չհանդիսանալով բժիշկ, կիրականացնի արհեստական բեղմնավորում կամ արհեստական բեղմնավորված էմբրիոնը կփոխադրի կնոջ օրգանիզմ:

Վերոնշյալ օրենքը հոդվածներ է պարունակում նաև մարդկային գենոմի արհեստական փոփոխության, հիբրիդների ձևավորման (մարդկային և կենդանու ձվաբջիջների միաձուլում), կլոնավորման, սեռի ընտրության, առանց բեղմնավորման համաձայնությունը ստանալու, առանց սաղմի փոխանցման համաձայնության, մահից հետո արհեստական բեղմնավորման (ձվաբջջի բեղմնավորում տղամարդու սպերմատազոիդի հետ՝ վերջինիս մահից հետո) և մարդկային էմբրիոնի հետ կապված մի շարք այլ հանցանքների համար:

Բացի վերոնշյալ օրենքից, մարդկային էմբրիոնների պաշտպանության վերաբերյալ դրույթներ է պարունակում նաև Գերմանիայի քրեական օրենսգիրքը: Մասնավորապես, օրենսգրքի 168-րդ հոդվածի առաջին մասը հանգուցյալի մարմինը կամ մարմնի մասերը ապօրինի կերպով վերցնելուց բացի քրեական պատասխանատվություն է նախատեսում նաև մահացած պտուղը կամ դրա մասերը ապօրինի վերցնելու համար: Հոդված 326-ը վտանգավոր թափոնների ապօրինի հեռացման համար որպես ծանրացնող հանգամանք դիտում է այն դեպքերը, երբ նման արարքը վտանգ է ստեղծում պտղի համար կամ կարող է առաջացնել փոփոխություն մարդու գենետիկ կոդում:

Հատուկ ուշադրության են արժանի Գերմանիայի քրեական օրենսգրքի աբորտի վերաբերյալ հոդվածները: Այսպես, օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկմամբ կամ տուգանքով է պատժվում հղիության ցանկացած արհեստական ընդհատում և միայն, 218ա-րդ հոդվածում է

նշվում աբորտի համար նախատեսված պատասխանատվության բացառությունների մասին[12]:

Այսինքն, Գերմանիայում՝ ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի, ապօրինի է համարվում ցանկացած աբորտ, և ապա նոր նախատեսվում են այդ կանոնից բացառությունները, ինչը վկայում է դեռևս չծնված մարդկային էակի նկատմամբ հարգանքի չափազանց բարձր մակարդակի մասին: Մեր օրենսդրության հետ համադրության մեջ ևս մեկ սկզբունքային տարբերություն կայանում է նրանում, որ Գերմանիայում քրեական պատասխանատվություն նախատեսվում է նաև ապօրինի աբորտ կատարած հղի կնոջ համար, սակայն վերջինիս համար նախատեսելով ավելի մեղմ պատասխանատվություն և բացառելով հանցափորձի համար քրեական պատասխանատվությունը:

Հղի կինը չի ենթարկվում պատասխանատվության, եթե հղիության դադարեցումը իրականացվել է բժշկի կողմից խորհրդակցությունից հետո և բեղմնավորման պահից անցել է ոչ ավել, քան 12 շաբաթ: Դատարանը կարող է հաշվի առնել հղիության արհեստական ընդհատման վիրահատության պահին հղի կնոջ բացառիկ սթրեսի տակ լինելու հանգամանքը: Իսկ բժշկի համար պատասխանատվություն է նախատեսվում կնոջը հղիության դադարեցման դրդապատճառները բացատրելու հնարավորություն չտալու համար, ինչպես նաև վիրահատության կարևորության, ընթացքի, հետևանքների, հնարավոր ֆիզիկական կամ մտավոր վտանգի մասին հղի կնոջը բժշկական խորհուրդ չտալու համար:

Գերմանիայի քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդատվությունը նպատակ է հետապնդում պաշտպանել դեռևս չծնված երեխայի կյանքը: Այն պետք է քաջալերի կնոջը շարունակել հղիությունը, օգնի կայացնել պատասխանատու և գիտակցված որոշում: Կինը հղիության բոլոր փուլերում պետք է տեղյակ լինի, որ չծնված երեխան իրավունք ունի ապրելու, և որ հղիության դադարեցումը կարող է օրինական համարվել միայն բացառիկ իրավիճակներում: Հղի կնոջը խորհրդատվություն տրամադրած մասնագետը պարտավոր է վերջինիս տրանադրել վկայական, որը պետք է ներառի խորհրդատվության վերջին կուրսի ամսաթիվը և հղի կնոջ անունը՝

[12] Տե՛ս Criminal Code of Germany, 13 November 1998:

համաձայն Գերմանիայի «Վիճելի իրավիճակներում հղիության մասին» օրենքի:

Գերմանիայի քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում նաև աբորտի գովազդի և աբորտի համար նախատեսված նյութերի տարածման համար:

Մալթան ևս էմբրիոնների իրավական կարգավիճակի հետ կապված հարցերը կարգավորել է ինքնուրույն փաստաթղթով՝ «Էմբրիոնների պաշտպանության մասին» օրենքով: Օրենքի 6-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում յուրաքանչյուրի համար, ով՝

1. արհեստականորեն կբեղմնավորի ձվաբջիջը ցանկացած այլ նպատակով, քան այն կնոջ հղիանալը, որից վերցվել է ձվաբջիջը,
2. բուժման մեկ ցիկլի ընթացում դիտավորյալ կբեղմնավորի միևնույն կնոջից վերցված ավելի քան երկու էմբրիոն,
3. կնոջ օրգանիզմ չի փոխադրի բուժման մեկ ցիկլի ընթացքում ստացված բոլոր էմբրիոնները,
4. էմբրիոնը կնոջ օրգանիզմից կհեռացնի մինչև արգանդի մեջ իմպլանտացիայի ավարտը՝ այն մեկ այլ կնոջ օրգանիզմ փոխադրելու համար,
5. կընտրի կամ կհեռացնի էմբրիոնը մարդկության գենետիկ որակների բարելավման նպատակով,
6. կիրականացնի արհեստական բեղմնավորում կամ էմբրիոնը կփոխադրի այն կնոջ օրգանիզմ, ով պատրաստվում է հրաժարվել երեխայից ծննդաբերությունից անմիջապես հետո (փոխնակ մայր)[13]:

Վերոնշյալ հոդվածը գրեթե նույնանում է Գերմանիայի համանման հոդվածի հետ՝ բացառությամբ բեղմավորվող ձվաբջիջների թույլատրելի քանակի՝ երկուսը երեքի փոխարեն: Սակայն Մալթայի օրենքը ավելի առաջ է գնում, արգելելով էմբրիոնների պահեստավորումը՝ ներառյալ սառեցման միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է հետագա բեղմնավորման համար:

Էմբրիոնների պաշտպանության մասին Մալթայի օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում նաև այնպիսի արարքների համար, ինչպիսիք են էմբրիոնների ոչ պատշաճ օգտագործումը, էմբրիոնների դիտավորյալ ոչնչացումը, սեռի ընտրությունը, կլոնա-

[13] Տե՛ս The Embryo Protection Act of Malta, 4 December 2012:

վորումը, առանց համաձայնության բեղմնավորումը, էմբրիոնների վրա փորձերի կատարումը և այլն:

Հատուկ ուշադրության է արժանի հոդված 19-ը, որը սահմանում է արհեստական բեղմնավորման ճանապարհով ծնված երեխայի կարգավիճակը՝ այն, ըստ էության, նույնացնելով բնական ճանապարհով ծնված երեխայի կարգավիճակին:

Օրենքի մակարդակով ամրագրված է նաև բժշկական ոլորտի մասնագետի՝ արհեստական բեղմնավորման ցանկացած միջոցառումից բարոյական սկզբունքներից ելնելով հրաժարվելու իրավունքը (հոդված 20):

Մալթայի վերոնշյալ օրենքը նախատեսում է նաև չափազանց հետաքրքիր լրացուցիչ պատժատեսակ, այսպես՝ անկախ օրենքով նախատեսված այլ պատիժների առկայության հանգամանքից, «Էմբրիոնների պաշտպանության մասին» օրենքով պատժված բժշկական ոլորտի մասնագետի նկատմամբ կայացված դատավճռի պատճենը դատարանը ուղարկում է «Առողջապահական մասնագիտությունների մասին» օրենքով նախատեսված հատուկ մարմնին և նախարարին:

Իսպանիան գնացել է այլ ուղիով և քրեական օրենսգրքով է կարգավորել էմբրիոնի քրեաիրավական պաշտպանության հարցերը՝ էմբրիոնների բեղմնավորման հետ կապված հարցերը կարգավորելով «Արհեստական բեղմնավորման մասին» առանձին օրենքով[14]: Այսպես, վերջինիս քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, ով ցանկացած միջոցով կամ եղանակով, առաջացրել է պտղի վնասվածք կամ հիվանդություն, որը լուրջ վնաս է պատճառել պտղի նորմալ զարգացմանը կամ առաջացրել է պտղի լուրջ ֆիզիկական կամ հոգեկան արատ, պատժվում է մեկից չորս տարի ժամկետով ազատազրկմամբ և ցանկացած բժշկական մասնագիտությամբ զբաղվելու կամ ցանկացած տեսակի հասարակական կամ մասնավոր գինեկոլոգիական կլինիկաներում ծառայություններ մատուցելու հատուկ արգելքով՝ երկուսից ութ տարի ժամկետով»: Իսկ 158-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նախորդ

[14] Տե՛ս Law on Artificial Procreation Act of Spain, 1988:

հոդվածով նախատեսված արարքը անզգուշությամբ կատարելու համար՝ նախատեսելով առավել մեղմ պատիժ[15]:

Ամփոփելով մարդկային էմբրիոնի քրեաիրավական պաշտպանության վերաբերյալ միջազգային չափանիշները և առանձին երկրների կարգավորումները՝ կարող ենք նշել, որ, թերևս, մեր երկրի իրավական համակարգին առավել համահունչ կլինի էմբրիոնների իրավական կարգավիճակի, արհեստական բեղմնավորման, էմբրիոնների պահպանության և վերևում քննարկված մյուս հարցերը կարգավորել առանձին իրավական ակտով, այն է՝ «Մարդկային էմբրիոնների պաշտպանության մասին» ինքնուրույն օրենքով, իսկ քրեական օրենսգրքում էմբրիոնների պաշտպանության մասին նախատեսել բլանկետային նորմ՝ «Մարդկային էմբրիոնների պաշտպանության մասին» առաջարկվող օրենքի պահանջների խախտման համար, որը հանգեցրել է էմբրիոնի ոչնչացմանը կամ վնասմանը, կամ խոչընդոտել է վերջինիս նորմալ ֆիզիկական զարգացմանը:

**Гоар Симонян**
***Аспирант кафедры уголовного права ЕГУ***

## СООТВЕТСТВИЕ ПОЛОЖЕНИЙ УГОЛОВНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РА О ЗАЩИТЕ ЭМБРИОНА И ПЛОДА ЧЕЛОВЕКА МЕЖДУНАРОДНЫМ ПРАВОВЫМ СТАНДАРТАМ

В статье рассмотрены положения общепринятых международных конвенций по правам человека о правовом статусе и защите еще неродившегося ребенка. Были представлены актуальные вопросы защиты эмбрионов и плода человека с учетом современного уровня развития медицины. Был изучен опыт ряда зарубежных стран в сфере правового решения этих проблем и в результате автором сделаны предложения направленные на развитие законодательных регуляции защиты еще неродившегося ребенка.

[15] Տե՛ս Criminal Code of Spain, 24 November 1995:

**Gohar Simonyan**
***PhD student of the YSU Chair of Criminal Law***

# THE COMPLIANCE OF THE PROVISIONS OF THE CRIMINAL LEGISLATION OF THE RA CRIMINAL LAW ON PROTECTION OF HUMAN EMBRYO AND FOETUS WITH THE INTERNATIONAL LEGAL STANDARDS

The article discusses the provisions of generally accepted international conventions on human rights in regard to the legal status and protection of the unborn child. The actual problems of protection of embryo / foetus are discussed in conjunction with the contemporary level of the medical science development. Respective foreign experience of certain countries was analysed and based on the study conducted, a number of legislative proposals are made aimed to the protection of the unborn child.

**Բանալի բառեր՝** *Էմբրիոն, սաղմ, երեխա, կյանք, պաշտպանություն, բեղմնավորում, աբորտ:*
**Ключевые слова:** *Эмбрион, плод, ребенок, жизнь, защита, оплодотворение, аборт.*
**Key words:** *Embryo, foetus, child, life, protection, fertilization, abortion.*